

«Հաստատում եմ»

Հայաստանի շախմատի ֆեդերացիայի
նախագահ՝ Ս.Սարգսյան

« 11 » « մարտի » 2019թ.

Հայաստանի աղջիկների առաջնության կիսաեզրափակիչ մրցաշարի

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Հայաստանի աղջիկների առաջնության կիսաեզրափակիչ մրցաշարը կանցկացվի Հայաստանի շախմատի ակադեմիայում (հասցե՝ Շևչենկո 34, ք. Երևան, ՀՀ) ս/թ. մարտի 23-ից 31-ը:

Մրցաշարն անցկացվում է հետևյալ տարիքային խմբերով.

- ա) մինչև 10 տարեկան (2008 թ. դեկտեմբերի 31-ից հետո ծնվածներ) աղջիկներ
- բ) մինչև 12 տարեկան (2006 թ. դեկտեմբերի 31-ից հետո ծնվածներ) աղջիկներ
- գ) մինչև 14 տարեկան (2004 թ. դեկտեմբերի 31-ից հետո ծնվածներ) աղջիկներ
- դ) մինչև 16 տարեկան (2002 թ. դեկտեմբերի 31-ից հետո ծնվածներ) աղջիկներ

Մրցաշարն անցկացվում է ՖԻԴԵ-ի շախմատի կանոնների համաձայն, շվեյցարական մրցակարգով, 9 խաղափուլով: դ (մինչև 16 տարեկան աղջիկներ) մրցաշարը, մասնակիցների քիչ քանակի դեպքում, հնարավոր է անցկացնել նաև շրջանային մրցակարգով:

Հավասար միավորներ վաստակելու դեպքում բոլոր մրցաշարում տեղերը կորոշվեն ըստ.

1. հատված Բուխհոլց -1 ցուցանիշի
2. գումարային Բուխհոլցի ցուցանիշի
3. սև գույնով խաղացած պարտիաների առավելագույն քանակի

Ժամակարգը (բոլոր մրցաշարերում)՝ 90-ական թույլ առաջին 40 քայլի համար, այնուհետև 30 թույլ մինչև պարտիայի ավարտը՝ յուրաքանչյուր քայլի համար 30 վայրկյան հավելումով՝ սկսած առաջին քայլից:

Հայաստանի առաջնության ուղեգրեր: Հայաստանի աղջիկների առաջնության եզրափակիչ փուլին մասնակցելու իրավունք կնվաճեն այն շախմատիստները, ովքեր իրենց տարիքային խմբերում կգրավեն հետևյալ տեղերը.

	Մինչև 10	Մինչև 12	Մինչև 14	Մինչև 16
Աղջիկներ	12	10	7	5

- Մրցաշարի բացումը՝ մարտի 23-ին ժամը 12:00-ին:
Խաղերի սկիզբը.
I տուր՝ մարտի 23 ժամը 13:00
II – IX տուրեր՝ ժամը 11:00
- Խաղասկզբից ուշացման թույլատրելի ժամանակը սահմանվում է 30 թույլ:
- Խաղասրահ չի թույլատրվում ներկայանալ բջջային հեռախոսներով, հակառակ դեպքում խաղացողին կգրանցվի պարտություն: